ԱՆԴՐԵԱՍ ՏԵՐ-ՄԱՐՈՒՔՅԱՆԸ ՄԵԴԱԼԱԳՈՐԾ

ՀԵՆՐԻ ՍԱՐԴՍՅԱՆ

Չնայած հայ կերպարվեստի աչքի ընկնող ներկայացուցիչ Անդրեաս Տեր-Մարուքյանին (1871—1919) նվիրված է առանձին աշխատություն[1], այնուամենայնիվ նրա ստեղծագործական ուղին և կենսագրության բազմաթիվ էջեր մթության մեջ են, իսկ աշխատանքներից շատերի տեղն անհայտ է։ Եթե Ա. Տեր-Մարուքյանի քանդակները քիչ թե շատ ծանոթ են գիտական աշխարհին, ապա գրեթե ուսումնասիրված չէ նրա գործունեությունը մեդալային արվեստի ասպարեզում։

Մեր տվյալներով առաջին մեդալը Ա. Տեր-Մարուքյանը ստեղծել է 1901 թ.։ Այն նվիրված է Ռ. Պատկանյանին։ Մեդալի առաջին երեսի վրա պատկերված է բանաստեղծի դիմաքանդակը մինչև կուրծքը, դեմքով դեպի ձախ։ Պատկերի ներքևում մեդալագործի ֆրանսերենով ստորագրությունն է և դրվագման տարեթիվը. T[ER] MAR[OUKIAN]. 1901: Երկրորդ երեսի վրա ռուսերենով գրված է մեդալը պատրաստող արհեստանոցի տերերի ազգանունը. БР[АТЬЯ] ВИШНЕВСКІЕ: Մեդալը բրոնզից է, չափերը՝ 75×65 մմ: Այն պատրաստվել է Մոսկվայում (նկ. 1)։

Անկանոն եզրերով, ձվաձև դաշտի վրա համեմատաբար բարձր փորագրությամբ քանդակագործը պատկերել է Ռ. Պատկանյանին, ստեղծելով հարթությունների հակադրություն։ Բանաստեղծի դիմաքանդակը հորինվել է մի քանի լուսանկարների և այլ պատկերագրական նյութերի հիման վրա։ Ռ. Պատկանյանը պատկերված է տարեց հասակում։ Նրա մշակված մանրամասներով դիմագծերը, համարյա չերևացող հագուստը, անգամ ակնոցը կերպարին հաղորդում են մտերմիկ տրամադրություն։ Սակայն դիմաքանդակի կեցվածքը, ներշնչված և խորաթափանց հայացքը վկայում են, որ մեր առջև ներկայացված է ոչ թե ընկճված ծերունի, այլ ոգեշնչվող, ոգեշնչող ու մարտնչող մի անձնավորություն։

1901 թ. Ա. Տեր-Մարուքյանի համար եղել է հիրավի «պատկանյանական» տարի։ Այդ թվականին նա ստեղծել է նաև Ռ. Պատկանյանի կիսանդրին և բանաստեղծի՝ Նոր Նախիջևանում կանգնեցված հուշարձանը։ Այդ աշխատանքների մանրամասն քննությունից հետևում է, որ թեպետ դրանք հորինվել են տարբեր նպատակներով, սակայն ունեն ընդհանուր գծեր։ Եվ դա բացատրելի է, քանի որ բոլոր աշխատանքների համար էլ իբրև պատկերագրական սկզբնաղբյուր օգտագործվել է միևնույն նյութը։ Դրանցում բացահայտվում է Ա. Տեր-Մարուքյանի տաղանդը որպես քանդակագործ-մոնումենտալիստի ու մեդալագործի՝ երկուսն էլ հավասարազոր, մեկը մյուսին չխանգարող, չմերժող, գուցե և՝ օգնող։

---

1 Մ. Սարգսյան, Անդրեաս Տեր-Մարուքյան, Երևան, 1960։

Մենք հեռու ենք այն մտքից, որ Ա. Տեր-Մարուքյանը ավելի քան 10 տարի (1901—1912) ոչ մի մեդալ չի ստեղծել, սակայն այդ շրջանից մեզ ոչինչ չի հասել։ Մեզ հասած նյութերի հիման վրա կարելի է ենթադրել, որ 1912 թ. Ա. Տեր-Մարուքյանի ստեղծագործական կենսագրությունում եղել է մեդալային արվեստի գործեր հորինելու տարի։ 1912 թ. Ա. Տեր-Մարուքյանը ստեղծեց չորս պլակետ՝ նվիրված Խ. Աբովյանին, Ղ. Աղայանին, Գ. Արծրունուն և Պ. Ադամյանին։

Նկ. 1

Նկ. 2

Խ. Աբովյանի պլակետի առաջին երեսին պատկերված է գրողի դիմաքանդակը՝ դեպի ձախ կիսաթեք (նկ. 2)։ Պլակետի ներքնամասում գրված է՝ Խ. ԱԲՈՎԵԱՆ, իսկ վերևում ծննդյան և մահվան թվականներն են՝ 1803—1848։ Պատկերի աջ կողմում ֆրանսերենով դրվագված է հեղինակի անունը, պլակետի պատրաստման տարեթիվը և վայրը. A. TER-MAROUKIAN. 1912. PARIS։ Պլակետը բրոնզից է, չափերը՝ 56×80 մմ²։

Խ. Աբովյանի դիմաքանդակը ներկայացված է համեմատաբար բարձր ռելիեֆի վրա։ Չնայած այն դեպի ձախ կիսաթեք է, սակայն հայացքով ուղղված է աջ։ Գրողը պատկերված է երիտասարդ հասակում։ Նրա խիտ և կանոնավոր սանրված մազերը, դիմագծերի կատարելության հասնող մշակումը և բարձր օձիքով վերարկուն պատկերին հաղորդում են ջերմություն։ Քանդակագործը կարտել է մեծ մտածողի, ազնիվ մարդու, պոետական խառնվածքի անհատականության դիմաքանդակ, որը, չնայած փոքր չափերին, մոնումենտալ ստեղծագործություն է։ Այստեղ Ա. Տեր-Մարուքյանը մեկ անգամ ևս ցույց է տվել մեդալային արվեստում դիմապատկերի ներկայացման անսահման հնարավորությունները։ Ինչպես նշվեց, Խ. Աբովյանը ներ-

2 Պլակետը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում (դուրքամատյան № 759)։ Նույն պլակետի գիպսից ձուլված մի այլ օրինակ պահվում է Խ. Աբովյանի տուն-թանգարանում։

կայացված է դեպի ձախ կիսաթեք։ Սակայն նրա հայացքի ուղղությունը, պատկերի և հարթության հակադրությունները ստեղծում են այնպիսի տպավորություն, որ դիմաքանդակը դիտվում է ամբողջությամբ, բոլոր կողմերից։ Դա քանդակագործ-մեդալագործի հայտնություններից մեկն է։

Ղ. Աղայանին նվիրված պլակետում (նկ. № 3) Ա. Տեր-Մարուքյանը նրան պատկերել է մինչև գոտկատեղը, դեմքով դեպի աջ, կրծքին սեղմած գիրքը։

Նկ. 3

Նկ. 4

Ներքևում գրված է. Ղ. ԱՂԱՅԵԱՆ. վերևում նրա ծննդյան և մահվան տարեթվերն են՝ 1840—1911։ Դիմապատկերի ներքևի մասում՝ ձախից, ֆրանսերենով գրվագված են պատրաստման տարեթիվը, մեդալագործի անունը և վայրը՝ 1912. A. TER-MAROUKIAN. PARIS։ Պլակետը արծաթից է, չափերը՝ 54×81 մմ[3]:

Ղ. Աղայանը պատկերված է տարեց հասակում։ Նրա լայն ճակատը, երկար մորուքը, խիտ բեխերը, աչքերի, հոնքի ու քթի գծային լուծումները ստեղծում են անողոք ժամանակից հոգնած, բարի մարդու պատկեր։ Մեդալագործը մանրակրկիտ մշակել է դիմաքանդակի յուրաքանչյուր մասը՝ սկսած դեմքի մանրամասներից մինչև հագուստը։

Մյուս պլակետը (նկ. 4) պատկերում է XIX դ. երկրորդ կեսի հայտնի հրապարակախոս ու քննադատ, հասարակական գործիչ, «Մշակ» թերթի հիմնադիր և խմբագիր Գրիգոր Արծրունուն (1845—1892)։ Պլակետը ստեղծելու տարում լրանում էր «Մշակի» 40-ամյակը։ Պլակետի վրա Գ. Արծրունին պատկերված է մինչև գոտկատեղը, թեթևակի դեպի աջ շրջված։ Պլակետի ներքնա-

---

3 Պլակետը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում (գույքամատյան № 1143, իրերի բաժին)։

մասում գրված է. 1845. Գ. ԱՐԾՐՈՒՆԻ. 1892, վերևում՝ 1872—ՄՇԱԿ—1912։ Դիմաքանդակի ձախ կողմում ֆրանսերենով գրված է մեդալագործի անունը, պատրաստման տարեթիվը և վայրը. A. TER-MAROUKIAN. 1912. PARIS։ Պլակետը արծաթից է (՞), չափերը՝ 54×80 մմ[4]։

Գ. Արծրունուն նվիրված պլակետը նախորդի նման կատարված է ցածր ռելիեֆի վրա, և դիտողը չի զգում բարձրությունների հակադրությունը։ Պլակետն առանձնանում է կատարման ոսկերչական նրբությամբ։ Շուրջ հիսուն տարի է ապրել Գ. Արծրունին, սակայն պլակետի վրա նա պատկերված է ապրած տարիներից ավելի մեծ։ Նրա երկար ու խիտ մորուքը, ակոսված դեմքը, լայն ճակատը, վերնազգեստի ծալքերը խոսում են այն մասին, որ գործ ունենք հոգնած մարդու հետ։ Սակայն պենսնեի ապակիների տակից ավելի խոշոր թվացող աչքերը վկայում են, որ քանդակագործը հորինել է հոգեբանական խորը կերպար՝ նպատակասլաց, կտրուկ ու անզիջում։ Ա. Տեր-Մարուքյանը կարողացել է այս փոքրիկ պատկերով վերհանել Գ. Արծրունու ներքնաշխարհը։

Նկ. 5

Նույն 1912 թ. Ա. Տեր-Մարուքյանը պլակետ է նվիրում հայ թատրոնի մեծանուն երախտավոր Պ. Ադամյանին (նկ. 5)։ Այս պլակետի ստեղծումը պատահական չէր Ա. Տեր-Մարուքյանի ստեղծագործական կյանքում. 1910—1912 թթ. քանդակագործը մի քանի անգամ անդրադարձել է մեծ ողբերգակի կերպարին։

Պլակետի առաջին երեսին պատկերված է հանճարեղ դերասանի դիմաքանդակը՝ մինչև գոտկատեղը, դեմքով դեպի աջ, գլուխը հենած աջ ձեռքին։ Ներքևում գրված է. 1849. Պ. ԱԴԱՄԵԱՆ. 1891 (ծննդյան և մահվան թվականները)։

Դիմաքանդակի ձախ կողմում ֆրանսերենով պլակետի դրվագման տարեթիվն է, հեղինակի անունը և պատրաստման վայրը. 1912. A. TER-MAROUKIAN. PARIS։ Այն արծաթից է, չափերը՝ 68×90 մմ[5]։

Հայկական մեդալային արվեստում Պ. Ադամյանը առայժմ ներկայացված է միայն այս պլակետով։ Մեծ դերասանը պատկերված է հասուն տարիքում, կյանքի մայրամուտին։ Պատկերվողի կեցվածքը և մտասույզ վիճակը կոմպոզիցիային հաղորդում են յուրօրինակ տրամադրություն։ Դիտողին

---

[4] Պլակետը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում (գույքամատյան № 86—Ա)։

[5] Պլակետը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում։ Այն առաջին անգամ առանց մանրամասն նկարագրության, իբրև բարձրաքանդակ վերարտադրվել է Մ. Սարգսյանի դրքում (Մ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 37)։

թվում է, թե Պ. Ադամյանը նստած խորհում է իր չիրականացված իղձերի ու մտահղացումների մասին։ Այս պլակետը Ա. Տեր-Մարուքյանի երկարատև աշխատանքի արդասիքն է։ Առաջին անգամ նա մեծ ողբերգակի կերպարը (կիսանդրի) ստեղծել է 1905 թ.։ Սակայն կիսանդրին և պլակետը իրարից տարբեր ու ինքնուրույն, Պ. Ադամյանի բարդ ներքնաշխարհը բացահայտող հակադիր ստեղծագործություններ են։ Եթե կիսանդրին Պ. Ադամյանին պատկերում է իր գործունեության ծաղկման շրջանում որպես լավատես, կենսախինդ և ապագայի նկատմամբ վստահությամբ համակված մի անձնավորության, ապա պլակետի վրա դիտողին ներկայանում է բոլորովին այլ պատկեր։ Թվում է, թե նա ամփոփվել է իր մեջ, մնալով իր կերպարների, տառապանքների ու իր հետ։

Ա. Տեր-Մարուքյանի ստեղծագործությունների շարքում կան նաև աշխատանքներ, որոնք ներկայացնում են հավաքչական կերպարներ։ Այդ առումով առավել հետաքրքրական է 1914 թ. ստեղծված «Հայաստան» պլակետը։ Ցավոք, այս պլակետը մեզ հայտնի է միայն հրատարակումներից[6]։ Այս գիպսե պլակետի առաջին երեսին պատկերված է կանացի դիմաքանդակ՝ մինչև կուրծքը, դեմքով դեպի ձախ։ Վերևում գրված են. ՀԱՅԱՍՏԱՆ. ներքևում՝ ARMENIE։ Պատկերված կանացի կերպարը մարմնավորում է Մայր Հայաստանը։ 1914 թ. Հայաստանը կանգնած էր օրհասի առաջ և այս պլակետի ստեղծումը պատահական չէր։ Այստեղ պատկերված երիտասարդ կինն ունի ուղիղ դիմագծեր, երկար հյուս, մինչև ուսերը հասնող գլխաշոր։ Խոշոր աչքը, խիտ հոնքը, երկար վիզը և մշակված դիմագծերն այդ հավաքական կերպարին հաղորդում են մեծ հմայք և խոր իմաստ։ Կերպարը, չնայած տխրության և անորոշության արտահայտության մարմնավորում է, դիտողին ներշնչում է անկոտրում հպարտություն։

Տեր-Մարուքյանի քննվող պլակետներն ու մեդալը անկասկած չեն կարող լրիվ ու բազմակողմանի բնութագրել քանդակագործին իբրև մեդալագործի։ Մենք համոզված ենք, որ Ա. Տեր-Մարուքյանը ստեղծել է ավելի շատ մեդալային արվեստի հուշարձաններ, քան ներկայացվածները։

Չնայած Ա. Տեր-Մարուքյանի ստեղծագործական ուղին մշտապես կապված է եղել ֆրանսիական արվեստի հետ, սակայն նա մինչև վերջ նվիրված մնաց իր ժողովրդին թե՛ ստեղծագործությունների բովանդակությամբ, թե՛ թեմաների ընտրությամբ, թեև նրա գործերում ֆրանսիական մեդալային արվեստի անխուսափելի ազդեցությունը զգացվում է։ Նրա մեդալային ստեղծագործությունների ձևը, ռելիեֆի ցածրությունը, դիմաքանդակների մանրամասն ու մանրակրկիտ մշակումը և այլն բնորոշ են XIX դ. վերջի և XX դ. սկզբների ֆրանսիական մեդալային արվեստին։

Թեև Ա. Տեր-Մարուքյանը որպես մեդալագործ հայ իրականության մեջ չունեցավ հետևորդներ, սակայն տարիներ անց նրա մեդալային ստեղծագործությունները հիշվում են իբրև հայ արվեստի պատմության մեջ բացառիկ երևույթ։

---

6 Թ ե ո դ ի կ, Ամենուն տարեցույց, 1921, էջ 243, Մ. Ս ա ր գ ս յ ա ն, Նշվ. աշխ., էջ 76։

АНДРЕАС ТЕР-МАРУКЯН-МЕДАЛЬЕР

ГЕНРИХ САРКИСЯН

Резюме

Один из основоположников армянской монументальной скульптуры начала XX в. А. Тер-Марукян (1871—1919) является также создателем памятников медальерного искусства.

Первая медаль им была посвящена писателю Рафаелу Патканяну в 1901 г. Наибольшую часть известных плакет скульптор создал в 1912 г. Плакеты посвящены писателям Хачатуру Абовяну, Газаросу Агаяну, общественному деятелю и редактору газеты «Мшак» Григору Арцруни, выдающемуся представителю армянской сцены Петросу Адамяну. Все названные плакеты и медаль хранятся в Музее литературы и искусства имени Е. Чаренца (Ереван) и вносятся в научный оборот впервые.

В 1914 г. А. Тер-Марукян создал плакету «Армения», местонахождение которой в настоящее время неизвестно.

До нас дошла лишь часть медальерных работ, созданных А. Тер-Марукяном, которая не может охарактеризовать его медальерную деятельность во всем объеме. Тем не менее, сохранившийся материал свидетельствует о том, что скульптор является одним из основателей медальерного искусства в армянской действительности, который впервые своими произведениями вывел медаль из мастерских ювелиров, создав произведения большого искусства.